ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ՊԱՐՍՅԱՆԻ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍԻԳԱՐԵՏԻ ԵՎ ՍԻԳԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ելնելով նախորդող տասնամյակում ՀՀ տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից ու միտումներից, ինչպես նաև ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի կազմում ծխախոտային արտադրատեսակների արտադրության տեսակարար կշռի զգալի աճից (2010թ.՝ 2%, 2019թ.՝ 9.3%) և արտահանման կառուցվածքում զբաղեցրած դիրքից (վերջին հինգ տարիներին ՀՀ-ից ամենաշատ արտահանվող երկրորդ ապրանքը սիգարետն է), ոլորտի զարգացման առանձնահատկություններն ու հեռանկարները առանձին գիտական հետազոտության կարիք ունեն: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ տնտեսությունում ծխախոտաարտադրության ոլորտի սոցիալական նշանակությամբ, հատկապես՝ նոր աշխատատեղերի ստեղծման ներուժով:

ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպությունների արդյունավետության հիմնախնդիրների և ճյուղի զարգացման միտումների գիտական ուսումնասիրության հրամայականը բխում է նաև ոլորտում նման հետազոտությունների սակավությամբ և առկա հիմնախնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ ընդհանրական համակարգված վերլուծության բացակայությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին առնչվող ձեռնարկատիրական գործունեության հիմնախնդիրները, առաջարկել դրանց լուծման և արդյունավետության բարձրացման

հիմնական ուղիները: Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել ձեռնարկատիրական մտքի զարգացման էվոլյուցիան, սկզբունքները, գործառույթներն ու շարժառիթները, ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը,
2. վերլուծել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը և հստակեցնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրելու հեռանկարները,
3. հիմնավորել ՀՀ-ում սիգար և սիգարետ արտադրող կազմակերպություններինտեղական հումքով ապահովման կարևորությունն ու տնտեսական նշանակությունը,
4. ներկայացնել ՀՀ համախառն արտադրանքի և արտահանման մեջ սիգարետի և սիգարի տեսակարար կշիռը, ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրությունը որպես տնտեսության կարևոր ճյուղ դիտարկելու տնտեսական անհրաժեշտությունը, հիմնավորել ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և տուրքերի կառուցվածքում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների առաջավոր և կաչևոր դիրքերը,
5. կատարել ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայի վերլուծություն, հաշվարկել շուկայի տարողությունը, ինքնաբավության աստիճանը, կատարել 2010-2019թթ. ներմուծման և արտահանման ծավալների և միտումների ուսումնասիրություն,
6. ներկայացնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման ուղիները, ձեռնարկատիրական ռիսկերը և ներդրումային միջավայրի բարելավման ուղիները:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը

Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ ուսումնասիրվել են ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների առկա հիմնախնդիրները, առաջարկվել են դրանց լուծման որոշակի ուղիներ և տարբերակներ: Հետազոտության՝ ՀՀ տարբեր գիտական հանդեսներում հրապարակված արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների տնտեսական գործունեության և կառավարման հիմնախնդիրների լուծման, հիմնախնդիրների հնարավոր այլընտրանքային լուծումների, ձեռնարկատիրական ռիսկերի կանխարգելման և չեզոքացման, ինչպես նաև ներդրումային ավելի բարենպաստ հենքի ստեղծման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքում հեղինակի կողմից արված առաջարկությունները կարող են օգտակար լինել ՀՀ սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների համար, նաև ոլորտում տարբեր ծրագրերի իրականացման գործընթացում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում մեր կողմից բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Կարծում ենք, հետազոտության առարկայի և օբյեկտի շրջանակը հստակեցման և վերախմբագրման կարիք ունի: Մասնավորապես, օբյեկտի ձևակերպման շրջանակում նշված՝ ՀՀ սիգար և սիգարետ արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը, ռեսուրսաօգտագործման արդյունքները, ծխախոտագործության հայրենական և արտասահմանյան առաջավոր տնտեսությունների ձեռնարկատիրության փորձը իրականում հանդիսանում են հետազոտության առարկա և ոչ թե օբյեկտ: Միևնույն ժամանակ, օրինակ, առարկայի շրջանակում ձևակերպված՝ սիգարետի և սիգարի արտադրության զարգացումն ու

արդյունավետության բարձրացումը իրականում հանդիսանում են նպատակ և ոչ թե առարկա: Նպատակ-խնդիրներ-օբյեկտ-առարկա գիտական շղթայի կողմնորոշիչ ներուժի լիարժեք օգտագործումը, կարծում ենք, կարող էր բերել գիտականության առումով առավել համընդգրկուն խնդրադրումների:

2. Ի թիվս հետազոտության նպատակից բխող խնդիրների, հեղինակը իր առջև խնդիր է դնում «ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը, վերլուծել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը» (էջ 5): Հավելված 2-ում և 1.2 ենթագլխում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է առկա մեթոդաբանությունը, էջ 24-ում նշելով, որ ատենախոսության երկրորդ գլխում այն կիրառվել է ոլորտի կազմակերպությունների համար: Մինչդեռ 2-րդ գլխում, նշված մեթոդաբանությունը կիրառվել է թերի, և հաշվարկված են միայն հիմնական և շրջանառու միջոցների արդյունավետության ցուցանիշները: Արդյունավետության այնպիսի հենքային ցուցանիշներ, ինչպիսիք են շահութաբերության, գործարար ակտիվության, վճարունակության և ֆինանսական կայունության ցուցանիշները, ոլորտի կազմակերպությունների համար հաշվարկված չեն: Կարծում ենք, նախընտրելի կլիներ, եթե հեղինակը շարժվեր հակառակ տրամաբանությամբ. ավելի քիչ ծավալ հատկացվեր մեթոդաբանության ներկայացմանը, ավելի շատ՝ դրա գործնական կիրառությանն ու վերլուծությանը: Նաև, քանի որ Ը. 00.02 դասիչը առաջին հերթին տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության և կառավարման խնդիրների ուսումնասիրություն է ենթադրում, ապա, կարծում ենք, խիստ նախընտրելի կլիներ, եթե հաշվարկվեին նաև ոլորտի միջինացված ցուցանիշներ, քանի որ առանձին կազմակերպությունների տվյալները ցուցչային են միկրո մակարդակում:

3. Էջ 58-ի Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ, օրինակ, Մասիս Տոբակո ընկերության աշխատողների թիվը 2019թ.-ին 2016թ. համեմատությամբ աճել է, սակայն դա ուղեկցվել է աշխատանքի արտադրողականության էական նվազմամբ, ինչն, արդյունավետության տեսանկյունից, արդեն իսկ խնդրահարույց է: Աղյուսակ 10-ի (էջ 67) տվյալներից էլ երևում է, որ միայն ի հաշիվ աշխատանքի արտադրողականության փոփոխության, Մասիս Տոբակոի համախառն արտադրանքը նվազել է շուրջ 840.5 մլն. դրամով: Զուգահեռաբար նվազել է արտադրանքի իրացումից հասույթը (տե՛ս Աղյուսակ 6), սակայն այս ամենի հետ մեկտեղ, դիտվել է հիմնական գործունեությունից շահույթի աճ: Այսպիսի զարգացումների պարագայում, առնվազն, կարող ենք առաջ քաշել անարդյունավետ ֆինանսական կառավարման արդյունքում արտադրական ներուժի մսխման կամ հաշվարկներում անճշտությունների կանխավարկածները: Կարծում ենք, հենքային ցուցանիշների այսպիսի դինամիկան հեղինակի կողմից ավելի խորքային մեկնաբանման կարիք ուներ:

4. Ի թիվս ոլորտի զարգացմանը նպաստող առաջարկությունների, հեղինակն առաջարկում է «ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին տեղական հումքով ապահովելու նպատակով սիգարետի հումք արտադրող գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ներգրավել պետական աջակցության ծրագրերում»(էջ 129): Սակայն, նշենք, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է ընդգծված հակածխախոտային քաղաքականություն և, մասնավորապես, «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքով հիմնական նպատակ է սահմանվում բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը

որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելը: Նույն օրենքի Հոդված 8.1.1-ով սահմանվում է ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների և դրանց օգտագործման դեմ պայքարի առնվազն հնգամյա կտրվածքով ռազմավարության հաստատման կառավարության լիազորությունը: Հետևաբար, այսպիսի պետական ռազմավարության պայմաններում, ոլորտին պետական աջակցության տրամադրումը առնվազն ռազմավարական նպատակադրումների հակասականության կարող է հանգեցնել: Կարծում ենք, այս առաջարկը վերանայման կարիք ունի, իսկ ոլորտի խնդիրների լուծումը առավելապես պետք է փնտրել շուկայի գործիքակազմի և առանձին կազմակերպությունների արդյունավետության կատարելագործման տիրույթում:

5. Ատենախոսության 1.3 ենթագլուխը առավելապես նկարագրական և տեղեկատվական բնույթ ունի, և պարզ չեն այն գործիքներն ու մեխանիզմները, որոնք, «Ֆիլիպ Մորրիս Ինտերնեյշնլ» ընկերության փորձի ուսումնասիրության արդյունքում, կարող են կիրառական նշանակություն ունենալ ՀՀ սիգար և սիգարետ արտադրող կազմակերպություններում:
6. Բացակայում են մի շարք աղյուսակների և գծապատկերների կազմման համար հիմք հանդիսացած տեղեկատվության աղբյուրներին համապատասխան հղումները (Օր.՝ էջ 38, Աղյուսակ 1, էջ 39, Գծապատկեր 1, էջ 41, Աղյուսակ 2, էջ 47, Աղյուսակ 4, էջ 48, Աղյուսակ 5, էջ 49, Գծապատկեր 2, էջ 79, Աղյուսակ 11 և այլն):

Եզրակացություն

Աննա Հակոբի Պարսյանի «Ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպություններում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը արդյունք է

հեղինակի ինքնուրույն գիտական հետազոտության: Աշխատանքում ստացված արդյունքներն ունեն ինչպես գիտական, այնպես էլ գործնական ու կիրառական նշանակություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները, որոնք արտացոլվել են հեղինակի կողմից հրապարկած գիտական հոդվածներում:

Աննա Հակոբի Պարսյանի «Ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտի կազմակերպություններում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Աննա Հակոբի Պարսյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Վ. Գ. Գյոզալյան**

18 մայիսի 2021 թ.

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վարդուշ Գաբրիելի Գյոզալյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտ.քարտուղար, պ.գ.թ. **Լ.Ս. Հովսեփյան**